

**ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝
21.10.2020թ. նիստի N 2 արձանագրություն**

Օրակարգ

1. Դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի իրականացման գործընթացի քննարկում:
2. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի կազմում ընդգրկված 36 անդամներից նիստին ներկա էին 29-ը : Նախքան օրակարգի հարցերին անդրադառնալը ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը առաջարկեց մեկ բուպե լուծյամբ հարգել արցախյան ազատամարտում զոհված հերոս - նահատակների հիշատակը :

Դեկանն իր խորհին շնորհակալությունը հայտնեց ԵԼՀ ֆակուլտետի բոլոր ամբիոնների վարիչներին և ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմին Համահայկական հիմնադրամին իրենց կատարած նվիրաբերությունների համար : Օժանդակությունը իրականացվել է ոչ միայն գումարային, այլ նաև հումանիտար օգնության տեսքով : Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի վարիչ Բ.Գ.Գ., պրոֆեսոր Շ.Պարոնյանը հավելեց, որ իր ամբիոնը ոչ միայն նմանօրինակ աջակցություն է ցուցաբերել, այլ նաև հսկայածավալ աշխատանք է իրականացրել մեդիա դաշտում : Մասնավորապես, դարաբաղյան հակամարտության գոտում ընթացող ներկայիս պատերազմին առնչվող թեմայով մեծ կարևորություն ներկայացնող թագմանություններ են կատարվել թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների կողմից :

Գ.Բարսեղյանը հորդորեց գործընկերներին հատուկ ուշադրության տակ պահել դասերի ընթացքի հետ ծագած խնդիրները՝ հավելելով, որ դասերը, անկախ ստեղծված պատերազմական իրավիճակից, պետք է կանոնավորապես իրականացվեն : Ինչպես դասախոսները, այնպես էլ ուսանողները իրենց բաժին պատերազմը պետք է մղեն թիկունքում այս ձևաչափով :

1. Դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի իրականացման հետ կապված հարցերին անդրադարձավ Ա.Չուբարյանը՝ նշելով, որ խոսել է հետբուհական վարչության ղեկավարի հետ և տեղեկացել, որ ԵԼՀ ֆակուլտետի հետ կապված ոչ մի նկատառում չունեն. ամեն ինչ ընթանում է իր բնականոն հունով:

2. Ընթացիկ հարցեր:

Գ.Բարսեղյանը ներկայացրեց ընթացիկ քննությունների հետ կապված վերջին քննարկումները: Նա հայտնեց, որ ելնելով ներկա պատերազմական իրավիճակից՝ քննարկվել է միջանկյալ քննությունների անցկացման կամ չեղարկման հարցը: ԵԼՀ դեկանը ևս երկու դեկանների հետ դեմ է արտահայտվել միջանկյալ քննությունների անցկացման նախաձեռնությանը: ԵՊՀ-ի մյուս ֆակուլտետների դեկանները “կողմ” են արտահայտվել վերը նշված նախաձեռնությանը, որի արդյունքում որոշվել է՝ միջանկյալ քննությունները սկսել նոյեմբերի 7-ից՝ առցանց բանավոր տարբերակով / թվով 5 քննությունները նվազեցվել են 3 -ի/:

- **ԼՍԵՑԻՆ՝** Անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ Ռաֆայել Հարությունյանի՝ «Մեդիա դիսկուրսի համակցված քննություն (անգլերեն քաղաքական խոսքի փաստական նյութի հիման վրա)» թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս.Ք.Գասպարյանը, բ.գ.թ., պրոֆեսոր Ա.Չուբարյանը նշեցին, որ թեման արդիական է և դատելով հարցադրումից կարելի է սպասել, որ նման հետազոտության իրականացումը և ուսումնասիրության ինտեգրատիվ (համակցված) մոդելի ստեղծումը կունենա ոչ միայն տեսական նշանակություն և կներդրվի մեդիա ուսումնասիրությունների, քաղաքական գիտությունների, սոցիոլոգիական խնդիրների քննության դաշտում, այլև կունենա կիրառական մեծ արժեք:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով թեմայի արդիականությունը, տեսական և գործնական կարևորությունը՝ հաստատել Ռաֆայել Հարությունյանի՝ «Մեդիա դիսկուրսի համակցված քննություն (անգլերեն քաղաքական խոսքի փաստական նյութի հիման վրա)» թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ք. Գասպարյանին: Որոշումը՝ միաձայն:

- **ԼՍԵՑԻՆ՝** Անգլիական բանասիրության ամբիոնի դասախոսներ Ն.Ներսիսյանի, Ն.Ավագյանի, Ա.Հակոբյանի, Ա. Մարգարյանի հեղինակությամբ ստեղծված “Words Commonly Confused by EFL Learners” ձեռնարկի (գրախոսներ՝ բ.գ.թ., դոցենտներ Մ. Տոնյան և Ա. Մաթևոսյան) քննարկման և հրատարակման երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս.Ք.Գասպարյանը նշեց քննարկվող ձեռնարկի ակնհայտ ձեռքբերումներն ու կիրառական լայն հնարավորությունները ինչպես մասնագիտական, այնպես էլ երկրորդ մասնագիտական օտար լեզու ուսումնասիրող ուսանողների համար: Այն կարող է կիրառվել նաև լեզվական բաժիններում տարվող աշխատանքի որոշակի փուլերում: Ելույթ ունեցողները՝ Ա. Չուբարյանը, Գ. Մուրադյանը և այլք, հավելեցին, որ ձեռնարկի առավելություններից է բնիկ լեզվակրի հետ հեղինակների համագործակցությունը, մասնավորապես՝ նյութի ընտրության հարցում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաշվի առնելով վերոնշյալը՝ երաշխավորել Ն.Ներսիսյանի, Ն. Ավագյանի, Ա. Հակոբյանի, Ա. Մարգարյանի հեղինակությամբ ստեղծված “Words Commonly Confused by EFL Learners” ձեռնարկը հրատարակության: Որոշումը միաձայն:

- **ԼՍԵՑԻՆ՝** Անգլիական բանասիրության ամբիոնի առկա ասպիրանտ Հայկ Դանիելյանի «Սարկազմը որպես լեզվագործաբանական քննության առարկա (անգլերեն նյութի հիման վրա)» թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս.Ք.Գասպարյանը ներկայացրեց Հայկ Դանիելյանի թեկնածուական ատենախոսության թեման. «Սարկազմը որպես լեզվագործաբանական քննության առարկա (անգլերեն նյութի հիման վրա)» նշելով, որ հետազոտության համար տեսական հիմք է հանդիսանում ժամանակակից լեզվաբանության գիտակարգերից մեկը՝ գործաբանական լեզվաբանությունը, որի հիմնական խնդիրն է ուսումնասիրել խոսքային գործունեության առանձնահատկությունները՝ դիտարկելով այն որպես խոսողի կողմից գիտակցաբար կատարվող և խոսքին բնորոշ օրինաչափություններով կանոնակարգվող գործընթաց: Աշխատանքի արդյունքում մշակված տեսական դրույթները նպաստավոր կլինեն ժամանակակից լեզվագործաբանության շրջանակներում չափազանց արդիական և քննարկվող լեզվագործաբանական նոր ստանդարտ մոդելի համալրման և կիրարկման առումով:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով թեմայի արդիականությունը, տեսական և գործնական կարևորությունը՝ հաստատել Հայկ Դանիելյանի «Սարկազմը որպես լեզվագործաբանական քննության առարկա (անգլերեն նյութի հիման վրա)»

թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել բ.գ.թ.,
պրոֆեսոր Ա. Է. Չուբարյանին: Որոշումը՝ միաձայն:

- **ԼՍԵՑԻՆ՝** Խաչատուր Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի հայցորդ Լուսինե Մադաթյանի՝ «Ժամանակի հայեցակարգավորման բառային միջոցները անգլիական և հայկական հեքիաթներում» թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս.Ք.Գասպարյանը, ներկայացրեց Լուսինե Մադաթյանի՝ «Ժամանակի հայեցակարգավորման բառային միջոցները անգլիական և հայկական հեքիաթներում» թեկնածուական ատենախոսության թեման, նշելով, որ աշխատանքի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից լեզվաբանական գիտության առաջատար ոլորտներից մեկի՝ ճանաչողական լեզվաբանության սկզբունքների կիրառմամբ՝ որպես հիմնարար միջոց՝ առաջ քաշելու, քննելու և վեր հանելու ժամանակի կարգի ոչ քերականական դրսևորումների յուրահատկությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով թեմայի արդիականությունը, տեսական և գործնական կարևորությունը՝ հաստատել Լուսինե Մադաթյանի՝ «Ժամանակի հայեցակարգավորման բառային միջոցները անգլիական և հայկական հեքիաթներում» թեկնածուական ատենախոսության թեման: Աշխատանքի գիտական ղեկավար հաստատել մանկավարժական համալսարանի կողմից առաջադրված բ.գ.թ., պրոֆեսոր Ել. Ս. Մխիթարյանի թեկնածությունը: Որոշումը՝ միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի

ղեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոց.՝



Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոց.՝



Մ.Դալայան

